ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2016 թվականի N 95-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 25-ի <<Վ.Հակոբյանին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետ նշանակելու մասին >> N 1006-Ա որոշման, ***որոշում եմ***՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2007 թվականի մարտի 9-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի կազմը հաստատելու մասին>> N 28-Ա, 2009 թվականի նոյեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին>> N 190-Ա, 2011 թվականի հուլիսի 11-ի <<Երեխայի տարիքը որոշող Սյունիքի մարզային հանձնաժողովի կազմը և լիազորությունները հաստատելու մասին>> N 119-Ա, 2012 թվականի փետրվարի 7-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների և դրանց անբաժանելի մասը հանդիսացող հողաշինարարական գործի կազմման աշխատանքները համակարգող, մշտական գործող հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2009 թվականի փետրվարի 3-ի N 11-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 14-Ա, 2012 թվականի փետրվարի 15-ի <<Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և

իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման մարզային հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին>> N 15-Ա, 2013 թվականի ապրիլի 10-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2014-2017 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի կազմման և իրականացման մարզային զարգացման հանձնաժողովի, ծրագրի մոնիտորինգի և գնահատման, ոլորտային աշխատանքային խմբերի անհատական կազմերը և ծրագրի կազմման ժամանակացույցը հաստատելու մասին>> N 47-Ա, 2014 թվականի նոյեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի զորահավաքային մարմնի կանոնադրությունը, անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2014 թվականի փետրվարի 18-ի N 20-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 174-Ա, 2015 թվականի փետրվարի 11-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու համար ուղեգրեր տրամադրող մարզային հանձնաժողովի գործունեության կարգը և անհատական կազմը հաստատելու մասին>> N 14-Ն, 2015 թվականի փետրվարի 24-ի <<Ներքին աուդիտի կոմիտեի անհատական կազմը հաստատելու մասին>> N 22-Ա որոշումներով հաստատված հավելվածներում <<Ս.Խաչատրյան>> բառերը փոխարինել <<Վ.Հակոբյան>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2016թ. հոկտեմբերի 14
ք. Կապան